

Ժողովուրդ

116
(2966)

3 սեպտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

Է. Երեան, Արուսյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ԾՐԱԳԻՐ՝ ԱՆԼՈՒԲՁ ՄՈՏԵՑՄԱՄԲ



Ազգային ժողովի «Ամառային դպրոցը» վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեծանվազբից 8 մլն դրամ թանկ է ստեղծվել 33 աղքատիկ պետությունների կրթությունը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2024 թվականի օգոստոսի 19-ից Երեանի եւ 33 մարզերի հիմնական դպրոցների ավագ դասարանների ու ավագ դպրոցների աշակերտների համար կազմակերպել էր երկշաբաթյա անվճար ամառային դպրոց: Եղել են հանդիպումներ եւ քննարկումներ պատգամավորների ու բարձրաստիճան պաշտոնյաների հետ:


«Ամառային դպրոցի» անցկացման համար Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը պայմանագիր է կնքել «ԼՈՐԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ-ի հետ: Պայմանագիրն արժեքով է 22 մլն 80 հազար դրամ գրեթե 56 հազար դոլար, որով սահմանված են եղել հստակ պահանջներ՝ մեջբերենք.

«33 ԱԺ 2024 թ. «Ամառային դպրոցի» (կրթամշակութային) կազմակերպում սույն թվականի օգոստոսի 19-ից մինչև օգոստոսի 31-ը ներառյալ: Ծրագրի շրջանակում, ըստ պայմանավորվածության (խմբ.), իրականացվել է մասնակիցների տեղափոխումը հյուրանոցից դեպի 33 Ազգային ժողով 30 անձի համար, 33 Ազգային ժողովից դեպի հյուրանոց՝ 60 անձի համար, իսկ այլ վայրեր՝ 60 անձի համար: Ընթրիքը նույնպես պատրաստվել է 60 անձի համար: Մասնակիցների ընդմիջման կազմակերպումը ռեստորանում (շաբաթ եւ կիրակի օրերին)՝ 60 անձի համար (1 անձը 12.000 ՀՀ դրամի սահմանում, ներառյալ՝ ծառայությունների մատուցման համար սահմանված բոլոր վճարները), որը ներառել է՝ սառը խորտիկներ, աղցաններ, տաք խորտիկներ, ապուրներ, տաք ուտեստներ, խավարտներ, զովացուցիչ ըմպելիքներ (նաեւ բնական), աղանդեր (խմորեղեն), միզ եւ այլն. վերջնական պատվերները պետք է լինեն (խմբ.) պատվիրատուի/կազմակերպիչների հետ համաձայնեցմամբ»:

Եղել են այցելություններ թանգարաններ, պատկերասրահ, կինոթատրոններ, Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, ռեստորաններ եւ այլն: 22 մլն դրամը, կթվա, կրթության համար ոչինչ է, նույնիսկ՝ քիչ, սակայն «Ամառային դպրոցի» ծախսերի բացվածքը առավել անլրջացնում է ծրագիրը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 33 արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին հարցաքննել են իր եղբոր՝ Միքայել Մինասյանի դեմ հարուցված քրեական գործով: Տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց պարզել 33 արդարադատության նախարարից, սակայն, ի պատասխան մեր հարցմանը, նախարարությունից հայտնեցին, թե տեղեկությունը իրականությանը չի համապատասխանում: Հիշեցնենք, որ Վատիկանում 33 նախկին դեսպան Միքայել Մինասյանի նկատմամբ դեռ 2018 թվականին հարուցված քրեական գործի երեք հոդվածներին ավելացել են եւս 13-ը: Դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Սամվել Հակոբյանի փոխանցմամբ՝ պետության կրած վնասը կազմում է 350 միլիոն դոլար:



Ներկայումս ԱՄՆ-ում 33 արտակարգ եւ լիազոր դեսպան Լիլիթ Մակունցը 2018 թվականի հեղափոխությունից հետո նշանակվել էր 33 մշակույթի նախարար, որին հաջորդեց ԱԺ պատգամավորի պաշտոնը: Նա իր հաշվետու տարվա հայտարարագիրը ներկայացրել է 2024 թվականի ապրիլի 16-ին, որում անշարժ գույք եւ տրանսպորտային միջոց չի ներկայացրել: Լիլիթ Մակունցի հաշվետու տարվա սկզբում առկա փոխառության գումարը կազմել է 4 մլն 78 հազար դրամ, ինչը տարվա վերջում նվազել է դառնալով 3 մլն 918 հազար դրամ, իսկ մյուս փոխառության չափը կազմել է 29 մլն 613 հազար դրամ, ինչը տարվա վերջում դարձել է 28 մլն 850 հազար դրամ: 33 արտակարգ եւ լիազոր դեսպանի բանկային հաշիվների մնացորդը հաշվետու տարվա սկզբում կազմել է 15 հազար դոլար՝ տարվա վերջում վերածվելով 27 հազար դոլարի, իսկ մյուս հաշիվի մնացորդը 794 հազար դրամից նվազել է՝ հասնելով 395 հազար դրամի: Հաշվետու տարվա նրա եկամուտը կազմել է 23 մլն 128 հազար դրամ, ինչը արտաքին գործերի նախարարությունից ստացված գումարն է: Լիլիթ Մակունցի ստացված վարկերի մայր գումարը հաշվետու տարվա ղեկավարների 31-ի դրությամբ կազմել է 32 մլն 768 հազար դրամ, որից 28 մլն 850 հազար դրամը բնակարանի հիփոթեքի գումարն է: Հետաքրքիրն այն է, որ Լիլիթ Մակունցը հայտարարագրում չի նշել որեւէ անշարժ գույք, սակայն նա նույն հայտարարագրում նշել է, որ հաշվետու տարվա վերջի՝ ղեկավարների 31-ի դրությամբ իր բնակարանի հիփոթեքի մայր գումարը կազմել է 28 մլն 850 հազար դրամ: Հիշեցնենք, նաեւ որ Լիլիթ Մակունցը եղել է ԱԺ «Իմ քայլը» խմբակցության ղեկավար:




Հայաստանի ողջ պատմության մեջ Նիկոլ Փաշինյանին հաջողվել է իր իսկ պատկերացումներով «կերտել իրական Հայաստան», որտեղ, պետական մակարդակով, այլեւ փակված է հայկական երկրորդ պետության՝ Արցախի էջը, իսկ Արցախի անկախության օրը ոչ մի միջոցառում չի կազմակերպվում, եւ ոչ մի ուղերձ չի հնչում: Երեկ Արցախի անկախության հռչակման օրն էր: Տարիներ շարունակ թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում այդ օրը տոնական մեծ միջոցառումներ են կազմակերպվել, որոնց պարտադիր մասնակցել է նաեւ Հայաստանի եւ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը: Այսօր, սակայն, Նիկոլ Փաշինյանի կերտած Հայաստանում, որն ընդամենը տարիներ առաջ Արցախի անվտանգության առաջին երաշխավորն էր, պետական մակարդակով անտեսում են Արցախի անկախության օրը: Մայր Հայաստանում երեկ ոչ միայն պետական մակարդակով միջոցառում չանցկացվեց, այլեւ իշխանության ներկայացուցիչներից որեւէ մեկն անգամ հարկ չհամարեց ուղերձ հղել օրվա կապակցությամբ: Երեկ Նիկոլ Փաշինյանն ու ՔՊ-ականները մեկը մյուսի հետեւից գեղեցիկ ուղերձներ էին հղել ուսումնական նոր տարվա առիթով, իսկ Արցախի մասին՝ զրո խոսք: Ավելին, այդ օրը Նիկոլ Փաշինյանը որոշել էր մարզային շրջագայություն կատարել տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ: Նախ Սյունիք, հետո Տավուշ՝ իր իշխանության օրոք մասնատված Կիրանց գյուղում դպրոցի բացմանը մասնակցելու: Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեցին, որ Նիկոլ Փաշինյանի ու կնոջ ժամանումից առաջ, նրանց վախճանի ու անհանգստությանը հազարից տալու համար՝ մի լավ ստուգումներ են կատարել դպրոցում եւ հարակից տարածքում, իսկ Փաշինյանին եւ կնոջը մեծ թվով անվտանգության աշխատակիցներ են ուղեկցել: Ի դեպ, ոչ մի խոսք չհնչեց նաեւ գերիների ու ռազմագերիների մասին:



ՍԿԱՆԴԱՎԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՂՂԱՍԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՆԴԱՏԸ ԽԼԵՑ ԲՊ ԿԼԱՆԸ

Օգոստոսի 30-ին Տեղի ունեցավ Գա...
սակորների ընդհանուր ժողով: «Օրա...
կարգում ուսումնական հարցերի հանձ...
նաժողովի դասավոր չհանդիսացող եր...
կու անդամների ընտրության հարցն էր:
Քվեարկության արդյունքներով ընտրվե...
ցին Սլավիկ Թորոսյանը և Գաբրիել
Պետրոսյանը:



ԻՆՉ Է ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԿԸ
ԵՎ ՈՎ ԿԱՐՈՂ Է ՆԵՐԳՈՎՎԿԵԼ
Դատավորների ընդհանուր ժողովն ունի
3 հանձնաժողովներ՝ Գնահատման
հարցերով, Էթիկայի և կարգապահական
հարցերով և ուսումնական: Հանձնաժո...
ղովների կազմում պարտադիր նախա...
տեսված է «ոչ դատավոր» անդամի մաս...
նակցություն, որտեղ կարելի է նաեւ քա...
ղաքացիական հասարակության ներկա...
յությունը: Ըստ դատական օրենսգրքի Ու...
սումնական հարցերի հանձնաժողովի՝ դա...
տավոր չհանդիսացող անդամ կարող է
ընտրվել այն իրավաբանը, որն օժտված է
բարձր մասնագիտական որակներով և
ունի իրավագիտության բնագավառում
գիտական աստիճան կամ մասնագիտա...
կան աշխատանքի առնվազն հինգ տար...
վա փորձառություն: 2020 թվականին
հանձնաժողովի կազմում ոչ դատավոր
անդամի պաշտոնում ընտրվել են Գաբրի...
ել Պետրոսյանն ու Հասմիկ Հարությունյա...
նը: Թե ինչով է հայտնի Գաբրիել Պետրոս...
յանը, ինչպես է վերջինիս բարձր մասնա...
գիտական որակները ստուգվել, պարզ
չէ: Հասմիկ Հարությունյանը հանդիսացել է
«Իրավունքների պաշտպանություն
առանց սահմանների» ՀՀ իրավաբանը
և քաղաքացիական ներկայացուցիչը
հանձնաժողովում, վերջինս հայտնի է
ուլորտային իր ակտիվ գործունեությամբ:

կամ ինչ հեղինակություն ունի, պարզ
չէ: Այստեղ կարելի է հասկանալ, թե ով է
Նա. Պետրոսյանը Արարատի մարզի դատա...
վոր, դատարանի նախագահ Հարութ
Պետրոսյանի հայրն է, ում հովանավորու...
թյամբ էլ Գաբրիել Պետրոսյանը իր հա...
մար պետական բյուջեից փաստացի աշ...
խատավարձ ապահովեց: «Ժողովուրդ»
օրաթերթին լուրեր հասան, որ Հարութ
Պետրոսյանը ոչ միայն զանգահարել է
դատավորներին և խնդրել, համոզել, որ
ձայն տան իր հորը, այլևս ըստ ականա...
տեսների՝ «Ժողովուրդ» օրաթերթը պատ...
մածի, դատավորը ընդհանուր ժողովին
նույն քարոզարշավը շարունակել է նաեւ
Նիստերի դահլիճ տանող դռան մոտ ան...
գամ: Ինչը դատավորի վարքագծի կանոն...
ների հետ, թերեւս, որեւէ աղերս չունի:

Ստեղծված իրավիճակի շուրջ «Ժողո...
վուրդ» օրաթերթը անձամբ մեկնաբանու...
թյուն խնդրեց դատավոր Հարություն
Պետրոսյանից, ինչից ի պատասխան՝ վեր...
ջինս ասաց, որ նման բան չի եղել: Մեր
այն պնդմանը, որ նա գանգառել է դա...
տավորների ու ավելին՝ քարոզարշավը
շարունակել է նաեւ Նիստերի դահլիճ տա...
նող դռան մոտ, Հարություն Պետրոսյանը
պնդեց, որ նման բան չի եղել: Մեր այն
հարցին՝ եթե այս ահագնագով զբաղվեն
իրավապահները արդյոք մտավախություն
չունի, դատարանի նախագահը Նշեց, որ
չունի որեւէ մտավախություն:

«Ժողովուրդ» օրաթերթը նաեւ դիմեց
ԲԴԻ, ինչին ի պատասխան՝ հայտնեցին,
թե. «ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՅՎԱԾՔԻ ՎԵՐԱ...
ԲԵՐՈՒՄ ԶԱՐԿԱՍՏՈՒՄ ԿՈՒՅՄԱՆ ՄԱՆ...
ԴԱՏԱ ԽԼԵՑ ԵՆ»:

Եւ անգլերենի իմացության խիստ անհրա...
ժեշտություն: Բացի այդ, այս իրադարձու...
թյան մեջ կարելի է նաեւ ուշադրություն
դարձնել, որ հանձնաժողովում քաղիա...
սարակության համար նախատեսված
մանդատը փաստացի զավթվել է դատա...
վորների կողմից: Ընդհանուր ժողովն ազ...
դակ է, որ Ներսիսը ընթանում են կործանա...
րար պրոցեսներ, որոնք կարող են էլ ավել...
լի վտանգավոր դառնալ ու Նոր խնդիրներ
առաջացնել, քանի որ մոտ 100 դատավոր
ինքնուրույն մտածել են ընտրել չի կարո...
ղանում:

ՔՊ-ԻՆ «ՄԵՐՏԱՃԱՇ»
ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐՈՒ

Իսկ ինչ վերաբերում է Հարություն
Պետրոսյանին, նա ՔՊ պատգամավոր
Տրդատ Սարգսյանի օգնականի՝ Ծեծի
արդյունքում վնասվածքներ ստացած ու
հետո մահացած փոխգնդապետի գործով
դատավորն է, ով փոխել է մեղադրյալի
կայանքը: Հատկանշական է, որ Տրդատ
Սարգսյանի եղբայրը՝ Դավիթ Սարգսյա...
նը, ով հասցրել է արագացված կարգով
դատավոր դառնալ, 2020 թվականին
ցանկացել է ուսումնական հարցերով
նույն հանձնաժողովի անդամ դառնալ,
սակայն, ինչպես Նշեցինք, ընտրվել էր
Հասմիկ Հարությունյանը: Ինչ կապ կա
դատավոր Հարության Պետրոսյանի, ՔՊ-
ական պատգամավոր Տրդատ Սարգսյա...
նի ու վերջինիս եղբայր Դավիթ Սարգս...
յանի միջև, ինչն է վերջիններիս միավո...
րում կասկածների տեղիք է տալիս: Սա...
կայն մի բան այս ժողովից հետո ակն...
հայտ է, որ Հարություն Պետրոսյանը դա...
տավորից պահանջվող վարքագծին ոչ
հարիր վարքագիծ է ցուցաբերել, ինչը,
ամեն դեպքում, իրավական գնահատա...
կանի պետք է արժանանա: Հիշեցնենք,
որ Հայկուհի Հարությունյանին ՔՊ-ն ԱԺ
դահլիճում նսեմացրեց ու Ազգային ժողո...
վից հեռացրեց, հիմա էլ քրոջը «մաքրե...
ցին»... ՔՊ-ի վրեժխնդրությունը սահման...
ներ չունի, եւ սա այն պատճառով, որ
Հայկուհի Հարությունյանը ՔՊ-ականնե...
րի ունեցվածքի մասով վարույթներ էր
հարուցել ԿԿՀ նախագահի պաշտոնում,
ինչը նրան չներվեց:

ՔՆՍՈՒ ՍՆՆՈՒԿՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՆԱԽԵԻՆ
ԹԱՂԱՊԵՏԻ ՀԱԲՅԸ՝
ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ



«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի
դարձավ, որ Արաբկիրի նախկին թա...
ղապետի ազատ արձակման հարցով
բողոք է ուղարկվել Վճռաբեկ դատա...
րան:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ
Վերաքննիչ դատարանը բավարարել է
Գլխավոր դատախազության բողոքը,
ու Արաբկիրի թաղապետ Արամ
Ազատյանը, տնային կալանքից հետո,
տեղափոխվեց քրեակատարողական
հիմնարկ: Եվ ահա նրա պաշտպանա...
կան կողմը Վճռաբեկ բողոք է ներկա...
յացրել՝ պահանջելով նրան ազատ ար...
ձակել:

Հիշեցնենք, որ Քննչական կոմիտեն
տեղեկացրել էր, որ ՔԿ պետության,
սահմանադրական կարգի հիմունքնե...
րի եւ հասարակական անվտանգու...
թյան դեմ ուղղված հանցագործու...
թյունների ընկության գլխավոր վար...
չությունում համապատասխան քրեա...
կան վարույթը նախաձեռնվել է քնն...
վում է քրեական օրենսգրքի 441-րդ
հոդվածի («Պաշտոնատար անձի կող...
մից իշխանական կամ ծառայողական
լիազորությունները կամ դրանցով
պայմանավորված ազդեցությունը չա...
րաշահելը կամ լիազորություններն
անցնելը») 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կե...
տերի, 46 (հանցակցություն)-441-րդ
հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կե...
տերի, 435-րդ հոդվածի («Կաշառք
ստանալը») 2-րդ մասի 3-րդ եւ 4-րդ
կետերի, 436-րդ հոդվածի («Կաշառք
տալը») 2-րդ մասի 3-րդ կետի եւ 437-
րդ հոդվածի («Կաշառքի միջնորդու...
թյունը») 1-ին մասի հատկանիշներով:

ՔՕ տարբեր հոդվածներով՝ մեղադ...
րանքներ են ներկայացվել 8 անձի, այդ
թվում՝ Երեւանի Արաբկիր վարչական
շրջանի աշխատակազմի 3 պաշտոն...
ատար անձանց: Նշված բոլոր ան...
ձինք ձերբակալվել են: Մեղադրյալնե...
րից 4-ի, այդ թվում՝ երկու պաշտոնա...
տար անձանց նկատմամբ որպես խա...
փանման միջոց է կիրառվել կալանքը,
մյուս պաշտոնատար անձի նկատ...
մամբ՝ տնային կալանքը եւ համակց...
ված՝ գրավը՝ 30 մլն դրամի չափով: Եվ
3 անձի նկատմամբ որպես խափան...
ման միջոց է կիրառվել բացակայելու
արգելքը»:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 30-ից սեպտեմբերի 2-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 223 դեպք:



ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ հայրության որոշման դեպքում գրանցման համար:
Նարինե Մարուքյան
(36 տարեկան, տնային տնտեսուհի)



ՊԱՏԱՍԽԱՆ. (Սկզիբը՝ նախորդ համարում) Ն. Մարուքյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ հայրության ճանաչման պետական գրանցման համար ներկայացվում են՝

4) երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի անձը հաստատող փաստաթուղթը եւ երեխայի մոր բացակայության մասին իրավասու մարմնի տված փաստաթուղթը (մոր մահվան վկայականը կամ տեղեկանքը, նրան անգործունակ ճանաչելու կամ մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու կամ նրան ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը) եւ երեխայի կենսաբանական հայր հանդիսանալու վերաբերյալ ԴՆԹ-ի (դեզօքսիռիբոնուկլեինաթթու) որոշումը,

5) չափահաս անձի համաձայնությունը՝ իր նկատմամբ հայրություն ճանաչելու դեպքում,

6) տասը տարին լրացած երեխայի համաձայնությունը, եթե հայրության ճանաչման պետական գրանցման հետեւանքով նախատեսվում է փոխել նաեւ նրա անունը կամ ազգանունը,

7) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճիռը եւ դիմողի անձը հաստատող փաստաթուղթը:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՊՎՎՈՒՐԳ». Եթե երեխայի ծնունդը գրանցել է օտարերկրյա պետությունը, ապա հայրության ճանաչման պետական գրանցումը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետությունում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ԿՐԹՎԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչո՞ւն է ու ի՞նչով է իրականացվում ազգային փոխամասնությանը դասկանող սովորողի ընդունումն ու ուսուցումը հաստատությունում:

Լարիսա Պետրոսյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Կարողական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու ազատելու կարգի» 5-րդ կետի համաձայն՝ «Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդունումը հաստատություն կարող է կատարվել սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը):

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՊՎՎՈՒՐԳ». Նշենք, որ եթե ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, եւ տվյալ բնակավայրում բացակայում է այլ հաստատությունում ազգային (մայրենի) լեզվով ուսուցման հնարավորությունը, ապա սովորողի ընդունելությունը տվյալ հաստատություն իրականացվում է՝ անկախ լիցենզիայով տրված սահմանային տեղերի սահմանափակումից:

ԼՈՒՐ ԿԱՐԴ

Լուսանկարը՝ համացանցից



Երկու օր շարունակ Երեւանի սրտում երեանցիներն ու քաղաքի հյուրերը վայելեցին Տիգրան Մանսուրյանի եւ Հանս Ֆրանկի լավագույն ստեղծագործությունները՝ «Սիմֆոնիկ Երեւանի» շրջանակում: Օրեր անց էլ Թումանյանի անվան այգում կրկին դասական երաժշտություն է հնչելու՝ Սիմֆոնիկ նվագախմբի երեւանյան առաջին միջազգային փառատոնի շրջանակում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+11 +16 +28 +33	Արարատ	+23 +25 +38 +39
Կոտայքի լեռներ	+10 +16 +28 +30	Արմավիր	+20 +22 +37 +38
Կոտայքի նախալեռներ	+20 +23 +35 +36	Վայոց ձորի լեռներ	+11 +14 +29 +31
Գեղարքունիք	+11 +16 +25 +28	Վայոց ձորի նախալեռներ	+21 +23 +36 +39
Լոռի	+14 +18 +29 +33	Սյունիքի հովիտներ	+21 +24 +36 +39
Տավուշ	+18 +22 +31 +36	Սյունիքի նախալեռներ	+14 +17 +30 +32
Արագածոտնի լեռներ	+11 +14 +17 +20	ԼՂՀ	+13 +16 +29 +32
Արագածոտնի նախալեռներ	+16 +18 +28 +31	Երեւան	+30 +32 +36 +38

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ.՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 2.9.2024

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: